20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԼՏԲ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

دره‌علیه‌ده غلطه‌ده آره‌وه‌لك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ
## ՕՐԱԳԻՐ
## Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|---|---|
| Կ. Պոլսոյ համար Տարեկան զանեկան առժաք | 150 |
| » » Վեցամսեայ » » | 75 |
| » » Եռամսեայ | 40 |
| Օսմ. երկիրներէ Տարեկան | 56 |
| » » Վեցամսեայ | 28 |
| Ընտիր թուղթի վրայ | 2 |
| Դաւառաց | 50 |

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

## ԿԻ՞Ն ԹԷ ՊԵՊԵՔ

ԻՊՍԷՆԻ ՄԷԿ ՆՈՐ ԹԱՏԵՐԱԽԱՂԻՆ ԱՌԹԻՒ

Բարիզի Թերթերը նախորդ շաբթուն բաւական զբաղեցան, և իրաւամբ, Հէնրիք Իպսէնի մէկ թատերախաղովը՝ ՆՕՐԱ կամ Պէպէ՛ք Տուն՝ որուն ֆրանսերէն թարգմանութիւնը ապրիլ 8/20 ին առաջին անգամ ներկայացուեցաւ Վօտվիլ Թատրոնին մէջ։ Նորվէկիացի հանճարեղ հեղինակը, որուն ամէն մէկ գրուածքը, իր պարզութեանը մէջ, էական հարց մը կը յուզէ, իր այս ընտանեկան առամին միջոցաւ բուռն եղբայրացութեամբ մը ուզեր է շեշտել կնոջ դերը ամուսնական յարկին տակ, և հայրերուն ու ամուսիններուն բանելիք ընթացքը՝ իրենց աղջկան ու կնոջ հանդէպ։ Նախ, խղճի հանդարտութեան համար, ըսենք թէ մեր «Առանին Հարցեր»ը կամ այն ուղղութեամբ գրուածքներ կը բաւեն մեզի, մեր համեստ շըրջանակին մէջ։ Եթէ քանի մը տող պիտի նուիրենք Նօրային, մի միայն գաղափար ...

... գտնուած է, վասն զի անոր յանձնուելէն երկու օր առաջ մայրը մեռած է եղեր։ Ասիկա արգիլք մը չըլլար որ Նօրա իր ազնիւ նպատակին չի հասնի։ Ամուսինը օդափոխութիւնը կը կատարէ ու կը վերադառնայ ապաքինած։ Այդ օրէն ի վեր, հեգ կինը տնական ծախքերէն պզտիկ խնայութիւններ ըրած է իր փոխ առած գումարին տոկոսները վճարելու համար, առանց ամուսնոյն ուշադրութիւնը հրաւիրելու։ Թօրուալտ Հէլմէր այդ միջոցին պաշտօնի բարձրացում մը կունենայ իր գործին մէջ ու նիւթական վիճակը կը սկսի բարուոքիլ։ Նօրա չունչ կ'առնէ. վերջապէս պիտի կրնայ գաղտնի պարտքը հատուցանել։ Իր դժբաղդութենէն, այն անձը ուսկից փոխառութիւն կատարած էր, կը գտնուի նոյն վարչութեան մէջ որուն տնօրէն կարգուած է Հէլմէր. այդ մարդը տիկին Հէլմէրին (Նօրային) դիմելով կը պահանջէ որ աւելի կարեւոր պաշտօնի մը անցընել տայ զինքը, և կը սպառնայ, հակառակ պարագային մէջ, նամակ մը գրելով ամուսնոյն, երեւան հանել կնոջը գաղտնիքը։

Աքանչելի կերպով յարդարուած են խաղին այս մասերը, ուր կը պատկերանայ մանկամարդ կնոջ առանին երջանկութիւնը՝ փոխառութեան սպառնալիքէն խռովուած.

...

## ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԵՑՈՅՑ (*)

ՀԻՆ ՏԱՐԵՑՈՅՑԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՍՏՂԱԲԱՇԽԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ

...

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (219)

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (219)

ԺԻՒԼ ԼԵՌՄԻՆԱ

# ԲԱՐԻԶԻ ԳԱՅԼԵՐԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

## ԶԱՐԸ

—Լա՛ւ ուրեմն, վարպետ, ամէն բանի պատասխանատու կ'ըլլամ եթէ բացարձակ տէրն ըլլամ իմ նաւազներուս։

—Այնպէս չէ՞։ Անհնազանդութեան ոևէ նշան տեսա՞ք։ Եթէ անանկ բան մը կայ, դուք ցոյց տուէք յանցաւորները, որպէս զի ես ձեռքովս սպաննեմ...

Տեղակալը ձեռքն երկարեց դէպ ի նաւուն առաջակողմը։

—Դուք անձամբ տեսէք, վարպետ, ըսաւ։ Զէ՞ք նշմարեր որ այս բոլոր մարդիկ, դեռ անգէտ այն վտանգին զոր քիչ ...

—Ա՞տ ինչ կը նշանակէ... հարցուց ուժգնութեամբ։

Այն մարդը որուն կ'ուղղէր խօսքը, թէև աւազակներուն ընկեր, ժամանակով պատուաւոր դիրք մը կը բանէր ընկերութեան մէջ։ Անմիտ սէր մը, թշթախաղի սէրը, խորտակած էր իր նաւազի ասպարէզը, և ոճրագործութեան մէջ նետած էր զինքը։ Այսօր գահավիժած էր անամօթութեան անդունդը։

Սակայն, ինչպէս ամէն զինք շրջապատող յանցաւորներուն, իր վրայ ալ մարդկութեան նշոյլ մը կար։

—Վարպետ, ըսաւ, երբե՛ք սպանդանոց մը գացա՞ծ էք։

—Կը ծաղրէ՞ք զիս, ըսաւ Պիսքաու որուն յօնքերը պռստեցան։

—Ոչ, վարպետ։ Մտիկ ըրէք։ Սպանդանոցներու մէջ մսավաճառները, սպաննելու վարժուած, երբեմն ուրիշներէ աւելի զօրաւոր կենդանիի մը կը հանդիպին, որուն վրայ կեանքը երկար ատեն կը դիմանայ. անոնք իրենց սիրտին մէջ կը զգան չես գիտեր ինչ գերագոյն գթութիւն մը. այդ տանջուող անասունը կը սարսափեցնէ զանոնք, կը շարժէ անոնց սիրտը...

...

